

armenian

by *mgr. georges yeghiayan*

vicar patriarchal (convent our lady of bzommar - lebanon)

and *lévon torossian*

writer and linguist (vienna - austria)

thanks to *aram sepetjian*

Հատուածներ

ՆԱՄԱԿԱՆԻ ԷՆ

Շանթահարում

Երբ շանթահարուիս գլուխէդ,

Մի սպասեր լսելու

Ձայնը որոտումին

1973

Խոհագիր

Եթէ բոլորս ունինք զգացումներ,

Սակայն ոչ որ անհրաժեշտաբար բանաստեղծ է ծնած,

Պարզապէս՝ կը փորձենք այդպիսին ըլլալ

1999

Անգիտութիւն

Ոչ որ կը ճանչնայ զիս այնքան՝

Որքան՝ ես ինքս.

Սակայն, տակաւին,

Ոչինչ գիտեմ իմ մասիս

1973

Կարեկցութիւն

Յիշել նուագագոյն չարիքը, զոր ուրիշին եմ պատճառած,

Եւ մոռնալ յոռեգոյնը՝ որ ուրիշէն եմ ստացած

1997

Սուր եւ Գրիշ

Եթէ գրիշդ անկարող է՝
Մի՛ դիմեր սուրին
1993

Մարգարէություն

Մարգարէ է ամէն մարդ.
Իրմէ ներս կը սկսի կեանքը,
Ու կ'աւարտի իրմով
1988

Երջանկություն

Եթէ մենք քաղենք՝
Բազմաստուածութենէն՝ յարգանք երկրին ու նախնեաց հանդէպ,
Ծայրագոյն Արեւելքի Կրօններէն՝ հոգեւորութիւն,
Հրէութենէն՝ տեսիլք եւ յարատեւութիւն,
Քրիստոնէութենէն՝ սէր եւ ներողամտութիւն,
Իսլամութենէն՝ ջերմութիւնը հաւատքին,
Աշխարհականութենէն՝ լայնախոհութիւն եւ պարզութիւն,
Մարդկայնութենէն՝ միասնական քայլընթաց,
Այն ատեն՝ մենք կ'ըլլանք
Երջանկագոյնը մարդոց
1990

Հայրենիք

Հողաջերտն է այս, ուր կը գտնէնի ազատութիւնը մեր,
Կը տարածուի, որպէս զի ընդգրկէ տիէզերհը,
Երթ փոհրանայ, կ'արգէլափակուի մեր երեւակայութեան մէջ
1990

Տեսիլք

... Երբ իրենց առաջնորդին վերջին ժամը մօտալուտ էր, հարազատները
շրջապատեցին զինք, խնդրելով իրմէ լսել իր հրաժեշտի պատգամները:
Ան ըսաւ.

Ազատագրեցէք դուք զձեզ նիւթի կապանքէն, ինչպէս՝ ես ինքս
կատարեցի. երբ եօթը տարեկանիս՝ թաղի աղ-քատին նուիրեցի իմ
նախասիրած խաղալիքս, որ ինձի չկրցաւ մոռցնել տալ
նուիրատութեան իմաստը:

Ազատագրեցէք դուք զձեզ կիրքէ, ինչպէս՝ ես ինքս ըրի. երբ տակաւին
տասնեւեօթ տարեկանիս՝ զոհեցի սէրս բարեկամութեան համար:

Ազատագրեցէք դուք ձեզ գիտութեան աշխարհէն, երբ քսանեօթը
տարեկանիս դադրեցայ վկայականներ ժողվելէ, որոնք կ'առաջնորդէին
զիս ունայնամտութեան եւ ոչ՝ խո-նարհամտութեան:

Ազատագրեցէք դուք զձեզ համբաւամոլութենէն, ինչ-պէս ես ըրի
երեսունեօթը տարեկանիս, քանզի հասկցայ թէ անհկա պարզապէս
ցնորք մըն է:

Ազատագրեցէք դուք զձեզ բնագանցական մտա-ծումներէ, ինչպէս՝ ես ըրի քառասունեւեօթը տարեկանիս, երբ ես համոզուեցայ թէ ճշմարտութեան հարցը պէտք է թողուլ ճշմարիտին:

Ազատագրեցէք դուք զձեզ աշխարհասիրութենէ, ինչ-պէս՝ ես ազատագրուեցայ յիսունեօթը տարեկանիս, երբ մարդկային վերաբերումներու մէջ զգացի կեղծիք եւ շողոքորթութիւն:

Ազատագրեցէք դուք զձեզ ձեր նմաններու ներ-կայութենէն եւ դարձէք մենակեաց ինծի նման, երբ վաթսունեօթը տարեկանին այլեւս ձեր շուրջ չգտնէք որեւէ հաւատարիմ բարեկամ:

Ազատագրեցէք դուք զձեզ Գաղափարէն, ինչպէս ես ազատագրեցի անձս եօթանասունեւեօթը տարիքիս, կա-սեցուցի գրելը եւ պատուեցի գիրքերս, որոնք զիս հեռու պահած էին բնութեան վայելքէն:

Ազատագրեցէք դուք զձեզ կարելի չափով ձեր մարմինէն, որպէսզի երբ հնչէ ամբողջական ազատա-գրումի ժամը, պատրաստ ըլլաք ինծի նման ազատա-գրուելու ձեզի ծանօթ կեանքէն, եւ սուզուելու տակաւին անծանօթ մնացածին մէջ...

1999

Հատուածներ
ԱԶԱՏԱԳՐԵԱԼԸ երկէն

Շունչը

(Ժամանակի եւ վայրի հասկացողութիւններէն առաջ)

Ահաւասիկ շունչ մըն եմ, կը շրջիմ տիեզերքի մէջ, ունիմ ոչ վայրի եւ ոչ ալ ժամանակի սահման: Կը շրջիմ մինչեւ որ ընթացքս աւարտի նորածինի մը թոքերուն մէջ: Այն ատեն միայն կը զգամ կեանքը լիապէս որ կը դառնայ էութեանս անբաժան մէկ մասը:

1995

Մեղեդին

(Իր ազատագրումը վերագտած երկրի մը մէջ)

Երկրի մը մէջ խումբեր իրարու դէմ պատերազմեցան մինչեւ փոխադարձ բնաջնջում, անոնց հետքերը անե-րեութեացան: Այն ատեն երկիրը վերագտաւ իր ազա-տութիւնը եւ յիշողութեան մէջ մնաց մեղեդի մը միայն, հանճարի մը կողմէ յօրինուած, որ ի գուր տեղ ջանաց հաշտեցնել թշնամիները: Վերջապէս բնութիւնն է որ իր թռչուններով, ծառերով եւ առուակներով գոյութեան մեղեդին նուագեց, մեղեդին ներհունութեան եւ ուժի:

Այո, ինքզինքս էր որ բնութիւնը վերարտադրեց:

1997

Բանաստեղծությունը*(Խաղաղ ժամանակ մը վոլկայի ափին)*

Ժողովուրդի մը յիշողությունը իմ մէջս կ'արձագանգէ անհեղինակ քերթուած մը.

Որդեակս,

Եթէ օր մը կարօտնաս զիս,

Մինչ ես իմ մեկնումովս ամբողջովին նոյնացած եմ անհունութեան հետ,

Դուն, ապրէ՛ կեանքդ՝ լիովին,

Ու երբ, քու կարգիդ, դուն ալ նոյնանաս անդեակականութեան հետ,

Վերադարձի՛ր ճգնաւորիս մօտ,

Հոն էութեան եւ ոչնչութեան մէջ,

Զիս պիտի վերագտնես

Թողթի մը առջեւ, գրիչ մը ձեռքիս

Վերանորոգումի մը փնտտութիւն մէջ

1997

Ժայռը*(Միրային պահ մը Կոպիի անապատին մէջ, Մոնկոլիա)*

Վերափոխուեցայ անշարժ ժայռի մը, որուն բնաւ չէ մօտեցած որեւէ էակ:

Երկու սիրահարներ իրենց սէրը կը քանդակեն վրաս, դարձնելով զիս վկան իրենց յոյզերուն եւ ապրումներուն:

1995

Խղճմտանք*(Հրաժարում՝ պայքարի ընթացքին)*

Իմ վրաս կը պարտադրեն մէկը որուն վրայ ես պարտադրուած եմ արդէն: Օրինակելի ձեռով կողք կողքի կը պայքարինք մեր պատանեկութեան շրջանին. մեր պայքարը կը դառնայ ւսելի կատաղի երիտասարդութեան օրերուն: Ընտրելով քաղաքական ասպարէզը որպէս ապրուստի միջոց եւ անուն մը շինելէ ետք, ձեռք կը ձգէ իշխանութիւն գոր կը շահագործէ: Երբ կը հարցնեմ իրեն. «Ի՞նչ կ'ընես, ո՞ր մնացին մեր օրինակելիութիւնն ու պայքարը»: Ինքզինք կ'արդարացնէ՝ ձեռք ձգուած մենաշնորհները պահպանելու պատրուակով:

Այդ օր կը ստորագրեմ իմ հրաժարականս:

1997

Ուրուականը*(Ժամանակէն եւ միջոցէն անդին)*

Վերադարձայ ուժի, զերծ ժամանակէ եւ միջոցէ, գիտակցութենէ եւ իրականութենէ հեռու...

1997

Իմաստունը

... Եւ մահը դեգերեցաւ Իմաստունին ճգնարանին շուրջ: Երբ իմացաւ անոր կեանքին օրինակելիութիւնը, հեռացաւ անկէ: Բայց երբ Իմաստունը անձամբ խնդրեց իր կեանքին վախճանը, Մահը տեղի տուաւ: Այդ ձեւով, Իմաստունը սկսաւ մաս կազմել բնութեան՝ տիեզերական փոխհակադէցութեամբ, ճիշդ այնպէս ինչպէս բոլոր էակները իրմէ առաջ եւ իրմէ ետք, դառնալով մասնիկը այն իրականութեան որմէ այնքան կը զարհուրէր:

Մեծ Մարդուն հարազատներն ու լման ժողովուրդը փութացին հրաժեշտի իրենց վերջին յարգանքը մատուցանելու Անոր: Ոմանք՝ ճգնարանէն խունկի բոյր առնելով, զինք «սուրբ» հռչակեցին: Ուրիշներ՝ ճգնարանէն բարձրացող լուսապսակ մը նկատելով, զինք հռչակեցին «նոր մարգարէ»:

Այն ատեն Իմաստունին անդրանիկ զաւակին անդրա-նիկ զաւակը բացաւ իր մեծ հօր կտակը եւ ներկաներուն

կարդաց զայն. «Կտակս գրուած է կեանքիս վրայ: Չայն կարդացէք եւ որպէս օրինակ առէք: Միշտ յիշեցէք որ ոչ ոք ձեզմէ ռեւէ մէկէն գերազանց է, ինչպէս ձեզմէ ոչ մէկը ուրիշ ռեւէ մէկէն գերազանց է:

Գալով ինձի, սովորական մահկանացու մըն եմ – թերեւս ազատագրեալներուն եւ ոգիով յարմարողներուն առաջինը. փափաքս է վերջինը չըլլալ, քաջ գիտնալով որ իսկական յարմարողներուն ոչ առաջինն եմ եւ ոչ վերջինը:

Մեկնումիս օրը թող ըլլայ տօնը իրականութեան յաղթանակին եւ տիեզերական ազատագրութեան: Թող գերեզմանս ամենայն պարզութեամբ կառուցուի ճգնարա-նին մէջ, տապանաքարիս վրայ հետեւեալ արձանագրու-թեամբ. «Աստ հանգչի մարդ մը կանաչ հովիտէն»: Ծգնարանիս դուռը, ըստ սովորութեան, միշտ բաց թող մնայ, առանց վերանորոգման հեռանկարի, լքուած ժամա-նակի մաշումներուն եւ բնութեան քմայքներուն:

Սիրելիներ, ուրախացէք ինձի համար, քանզի որքան ալ ընդարձակ ըլլայ վայրը, անոր չգոյութիւնը աւելի ընդարձակ է: Նմանապէս, որքան ալ զօրաւոր ըլլայ զգացումը՝ անոր չգոյութիւնը աւելի զօրաւոր է, եւ որքան ալ տարածուն ըլլայ իրականութիւնը անոր չգոյութիւնը աւելի անսահման է»:

Մայիս 1996

Հատուածներ**ԿԵԱՆՔԻ ՅԱՐՄԱՐՈՂ ԷՆ****Խուզարկողը**

Գիշերով կը բռնեմ զինք՝ աղբամանները խուզարկած պահուն. զինք այսպանելէ ետք, կը թողում իր տխուր ճակատագրին...

Այնուհետև կը հետապնդեմ այդ թշուառականը. նախ՝ կու գայ գիշերները, ապա՝ առաօտները, ի վերջոյ օրուան բոլոր ժամերուն: Մեր բարեկամը կը վարժուի այդ իր ամօթալի աշխատանքին եւ փոխանակ առաջին օրերուն նման գայն ամչնալով կատարելու, կանոնաւորութեամբ եւ արհեստավարժութեամբ կը սկսի գործադրել գայն: Այն աստիճան որ երբ վերջին անգամ մեր նայուածքները կը հանդիպին իրարու, ե՛ս եմ որ ամօթ կը զգամ:

1999

Նոյնացում

Հիմա որ վերջ կը գտնեն հայցուորին վկայութիւնն ու պաշտպանութեան պաշտպանողականը, Դատաւորն Աս-տուած՝ որ ցարդ լուռ մտիկ կ'ընէր, պէտք է արձակէ իր վճիռը:

Եւ ահա խաւարամած լոյս մը կը ժայթթէ խորշէն որ արգելարան ու ազատ միջոց է միանգամայն: Խորշին ընդմէջէն լոռութիւնը զիս կը հրաւիրէ ծանօթանալու Դատաւորն Աստուծոյ հետ եւ լսել անոր տուած վճիռը: Կը մօտենամ ուրեմն, աչքերս գոց դիտելու համար – անշարժ: Արուեստական հայելի մը զիս կը ներկայացնէ Դատաւորն Աստուծոյ – արձակելով վճիռ մը որ հիմնուած է մարդկային խղճմտանքին վրայ եւ որուն նշանաբանն է «անմեղութիւն»: Կ'անդրադառնամ թէ կը գտնուիմ իմ իսկ ներկայութեան, թէ հակասութիւնները կ'անհետանան եւ նոյնացումը կը կատարուի:

Ահա ուրեմն կը գտնուիմ ներկայութեանը թէ՛ մարգարէներուն եւ թէ թշուառներուն: Կը միանամ անոնց եւ կը նոյնանամ անոնց հետ, Դատաւորն Աստուծոյ հետ, որովհետեւ բոլորս ալ ունինք նոյն ճակատագիրը: Խորքին մէջ գիտակցութիւնը պարզապէս երաշխաւորութիւնն է մարդկային հաւասարակշռութեան եւ ոչ թէ տարհամոզումի զանազան երեսակներուն արտայայտութիւնը:

Ահա ուրեմն վերստին կը վերադառնամ ամենակարողութեան, էութեան եւ ոչնչութեան գորս երբեք լքած չէի: Ահաւասիկ ուրեմն, կը կազմեմ անքակտելի մասը ամենակարողութեան, էութեան եւ ոչնչութեան, որովհետեւ մահէն ետք չկան անջատ մասնիկներ:

1998

Մեկնողը

Աշխարհը եղեր էր նախորդ կեանքի մը օրրանը. անոր տուած անցելաբաղձ կարճ այցելութենէ մը ետք, կը շարունակեմ շրջապտոյտս: Ծարունակ կ'ապրիմ երկրային յիշատակներովս, հոն տուած այցելութենէս ետքն ալ: Այսպէս կը սաւառնիմ անհունութեան մէջ, առանց վայրի եւ ժամանակի որեւէ սահմանի:

Նոյնիսկ երբ կը գտնուիմ բացարձակ գիտութեան եւ տիեզերական ճշմարտութեան ոլորտներուն եւ նորի որոնումին մէջ, Մարդը գերազանցող երեւոյթներու կողքին, միտքս կը չարչրկէ մտահոգութիւն մը. Մարդը, անոր առօրեայ կեանքը, ապագան, բարօրութիւնն ու ազատութիւնը:

Որովհետև, առանց Մարդուն ի՞նչ պիտի ըլլար կեանքին եւ մահուան իմաստը: Ի՞նչ պիտի ըլլար ամե-նակարողութեան իմաստը իր երկու երեսակներով՝ գիտու-թեամբ եւ ճշմարտութեամբ: Եւ ես ինձի հարց կու տամ. «Ի՞նչու աշխարհի վրայ մարդկային երջանկութիւնը կը մնայ անհասանելի»:

Համարում ունիմ Մարդուն անդեմական կեանքին վրայ, որովհետև անձամբ հոն կը գտնուիմ արդէն: Սակայն ի՞նչ մեկնաբանութիւն տալ Մարդուն աշխարհիկ կեանքին: Հնարաւոր է անոր պայմանները բարելաւել: Ի՞նչպէս կարող եմ այդ բանը իրագործել այն տեղէն ուր կը գտնուիմ: Միայն մահը վերջ կը դնէ անօթութեան եւ ընչաքաղցութեան, նուիրեալին եւ յանդուգնին երազին, գիտցողին ու չգիտցողին վիճակներէն: Մահուան միջոցաւ է որ վերջապէս կը հաստատուի հաւասարութիւն մը բոլորին միջեւ: Մտահոգութեանս առարկան բնականաբար Մարդն է... Սակայն կատարելապէս նոյնացած չե՞մ Անոր եւ Տիեզերքին հետ, ժամանակէն եւ անջրպետէն դուրս, կեանքի եւ մահուան մէջ: Ինչո՞ւ անով մտահոգուիմ ուրեմն: Ես մեկնող մըն եմ, կ'ըսեմ ձեզի, ազատագրեալ մը ամէն տեսակի արտայայտութենէ, գրաւոր թէ ոչ: Մեկնող մը՝ ազատագրուած ամէն տեսակի մտածո-դութենէ, նոյնիսկ սեղմ ու սահմանափակուած: Մեկնող մը՝ ազատագրեալ մը Մարդկութենէն, իր խնդիրներէն ու ցաւե ռէն: Մեկնող մըն եմ ես, ազատագրեալ մը՝ ազատագ-րութեան իսկ կոչէն, բացարձակ գիտութենէն եւ տիեզե-րական ճշմարտութենէն: Մեկնող է նաեւ Մարդը, ազա-տագրեալը Տիեզերքի Աստուծմէ: Մեկնող է, վերջապէս, Տիեզերքի Աստուածը, իր կարգին՝ ազատագրեալը Մարդէն:

Մեկնող եմ ես, մեկնող է Մարդը, մեկնող է Տիեզերքի Աստուածը:

Ազատ եմ ես, ազատ է Մարդը եւ ազատ է Տիեզերքի Աստուածը:

1999

Հատուածներ

ԵՐԱԶԿՈՏ ԷՆ

Վերջինը

... Իր կեանքին վերջին պահերուն, երազկոտը – երկարօրէն մտածած ըլլալով – յանգեցաւ հետեւեալ եզրակացութիւններուն. Աստուած կը ծնի, կը մեծնայ եւ կը ծերանայ մարդոց միտքին մէջ: Անոնք որոնք Զինք կը յղանան իրենց սեփական պատկերին համաձայն, կը խորհին թէ Աստուած Մարդը ստեղծեց միայն զբօսնելու համար: Իրենք ալ իրենց կարգին անձնատուր կ'ըլլան զբօսանքին: Անոնք որ, սակայն, կ'երկիրդին Աստուծմէ, պարզապէս կը մոռնան ապրելու: Իր օրինակին վրայ հիմնուած Աստուծոյ մը փնտրութեամբ զբաղած, միջոցին եւ ժամանակին մէջ ծերանալով, գոյութեան եւ չգոյութեան մէջ կորսուած,

Մարդը կը մոռնայ որ մահը հիմնովին կը ջնջէ ամէն ինչ եւ Զինք ամբողջութեամբ կը նոյնացնէ իր հետախուզածին եւ տակաւին չհետախուզածին հետ:

Մարդը, այդ խոհուն էակը, սարսափելով մահէն՝ ա՛լ աւելի կ'երկիրդի անկէ: Չի կրնար ուրեմն ազատագրման եւ նոյնացման հասնիլ նոյն դիրութեամբ որքան բնութեան եւ տիեզերքի միւս տարրերը: Պարտի վերաշխուժաւորել իր տրամաբանութիւնը՝ կարենալ ըմբռնելու համար ազատագրման եւ նոյնացման զոյգ հասկացողութիւնները: Միւս կողմէ, երազելով կեանքէն ետք ուրիշ կեանք մը, զայն կ'երեւակայէ իրեն ծանօթին նման, միայն յաւիտեան: Բայց այդ պարագային, այդ կեանքը պիտի չըլլայ արդեօ՞ք միապաղաղ: Եւ Մարդը՝ ինքնին՝ պիտի չվե-րածուի՞ Աստուծոյ:

Հաւատքի իր փնտրտութիւն մէջ՝ Մարդը կը հեռանայ իր նմաններէն եւ կ'ընդդիմանայ անոնց: Ակնկալելի չէ՞ր որ այդ պայմաններուն տակ աւելի մօտենար ինքզինքին, դառնալով ինքնավստահ, եւ մարդկութեան վեհ արժէք-ներուն:

Գալով նոյնինքն հաւատքին, բնականաբար կը ներկայացնէ փրկութեան լաւագոյն ուղին, բայց անորոշ փրկութիւն մը, մինչ մարդկայնութեան ի խնդիր աշխատելու կամքը աւելի ապահով ուղին կը հանդիսանայ:

Տակաւին երէկ, Մարդը բնութեան կ'ենթարկուէր եւ աւելի քան կը համակրէր անոր: Այսօր Մարդը կը գործածէ

եւ կը շահագործէ բնութիւնը: Մինչեւ հիմա անոր գոյութիւնը պահած էր պատմականօրէն դանդաղ (յ)եղա-շրջում ունեցող անցեալի մը մէջ: Պիտի կարենա՞յ զայն պահպանել հետզհետէ աւելի արագօրէն եղաշրջող աշ-խարհի մը մէջ:

Երազկտոր այս բոլորէն կ'եզրակացնէ թէ ոչ մէկ ապագայ գոյութիւն ունի մարդկութեան մը համար որ մշտապէս բաժնուած է ցեղային, լեզուական, սահմա-նային, դաւանաբանական եւ վարդապետական նկատում-ներով: Մարդկութիւն մը որ միացած է լոկ ընչաքաղ-ցութեան շուրջ, մոռցած ըլլալով մարդկայնութեան ամէն հասկացողութիւն:

2000

Թարականներ Էն

9

Նորածինն եմ, պատանին.

Ծերունին եմ, յաւիտենականութիւնը.

Հայրն եմ, յօգնութիւնը.

Մայրն եմ, հունձքը

Անշունչն եմ, շարժողը.

Մշակոյթն եմ, բերքը.

Բարին եմ, տուչութիւնը.

Չարն եմ, թշուառութիւնը

Սէրն եմ, գթութիւնը.
Ատելութիւնն եմ, դժգոհութիւնը.
Յոյսն եմ, յուսադրումը.
Հարստութիւնն եմ, ճակատագիրը

Մտածումն եմ, ճշմարտութիւնը.
Հաւատքն եմ,
Տեսնողն եմ, տեսանելին.
Եւ ամէն գիսաւոր աստղ

Ես կեանքն եմ, մահը.
Գոյութիւնն եմ, չգոյութիւնը.
Աստուածն եմ, անմահութիւնը.
Ամէն բան եմ, եւ ոչինչ

Ես Մարդն եմ
2000

11

Գոյութիւն ունիմ, ուրեմն պատասխանատու եմ.
Գոյութիւն ունիս, ուրեմն պատասխանատու ես.
Գոյութիւն ունինք, ուրեմն պատասխանատու ենք.
Մեզ իրարու կը կապէ.
Զօրակցութիւնը մեզի կը պարտաւորեցնէ.
Լաւագոյնին թէ յոռեգոյնին համար.
Պարտականութիւնը մեզ կը ստիպէ
2000

Հատուածներ
ԱԼՏԱ-ՕՄԵԿԱ ԷՆ

Մեկնող ԷՆ

ՈրքաՓՆ
Ժամանակ վատնեցի ցնորքներով
Հանդիպման մը կամ համբոյրի մը յոյսով
Որքա՞ն ժամանակ վատնեցի
Անկարելիին ձգտումով եւ անուրջներով
Որքա՞ն ժամանակ վատնեցի

Երկրի վրայ, ծովու վրայ, օդին մէջ
Ճամբորդել ցանկալով

Աստուած իմ, սակայն որքա՛ն կարօտ կայ իմ մէջս
Այդ կորսուած ժամանակին համար
2002

Կեանքի մասին

Որուն վերադարձի ճամբուն վրայ կը գտնուիմ
Եւ զոր փորձեցի ըմբռնել եւ վերլուծել
Ոչ առանց փիլիսոփայութեան
Շատ աւելի հարցում ունիմ քան պատասխան
2002

Վերջին արցունքները

Ահա կը հոսին աչքերէս.
Մեկնումի արցունքներն են:
Արդեօք բաժանումի արցունքներուն չափ
Դառնագին ու տա՛ք պիտի ըլլան,
Թէ ուրախալի ու մեղեդիով լի,
Ինչպէս ազատագրման մը համար

Վերջին արցունքները ահա կը հոսին,
Ջրվէժի մը նման
Եւ զիս կը մղեն թիավարելու
Դէպի բացերը ծովուն
Ուր կ'ապրիմ ուրախութիւն մը անհուն:
Շարական մը կը մրմնջեմ,
Բաժանումի երգ մը՝ զոր յօրինած չեմ,
Ջայն կը մրմնջեմ առաջին անգամ
Երբ ուժերս զիս կը լքեն
Վերջին անգամ:
Ջայն միշտ կը մրմնջեմ,
Յուսալով՝ երբ վերջանայ, կարենամ մեկնիլ:
Ջայն միշտ կը մրմնջեմ
Եւ ահա կը մեկնիմ
Այս ափերէն
Անցնելու համար, ուրախութեամբ,
Անհունութեան ափերուն
2002

***Խօսակիցը* երկէն**

Կայէն

Ի՞նչ ըրիր, Կայէն, կամ ի՞նչ ըրաւ Մարդը քեզմով: Եղբա՛յրդ
սպանեցիր, թէ Մարդն էր որ քեզ մեղադրեց այդ ոճիրով՝ քեզ իր
երեսակայութեան մէջ ստեղծելէ ետք:

Եթէ ճիշդ է որ Աստուած Աբելը նախընտրեց քեզմէ, անոր ընծայաբերութիւնն ընդունեց՝ մերժելով քուկդ, նաեւ քու սէրդ Իրեն հանդէպ, չգնահատեց աշխատանքդ, եթէ ճիշդ են այս բոլորը, այն ատեն պատրաստ եմ քեզի շնորհելու մեղմացուցիչ դէպք յանցանաց, քեզի՝ մտապէս եւ ֆիզիքապէս տկար արարածիդ: Բայց եթէ Աբելը եղած ըլլար քեզ սպանողը, հակառակ Աստուծոյ իրեն ընծայած խանդաղատանքին, երբեք պիտի չներէի իրեն:

2002

Կարեկցութիւնը

Զայն կը գտնեմ հոն՝ խաչուած: Հոն կը գտնեմ զայն՝ ուրիշը փրկելու զոհողութիւնը մինչեւ մահ հասցուցած: Իսկ մեր միջեւ հաղորդակցութեան հարց չկայ, որովհետեւ կը գոյակցինք արդէն:

2002

Հողմադացներ

Սերվանթէս, երկա՛ր ատենէ ի վեր կը փնտռեմ քեզ, բայց կը հանդիպիմ միայն Տոն Քիշորթի, որ Ռոսինանդի վրայ հեծած, կ'արշաւէ դէպի իր հողմադացները, ետեւէն՝ իր էշին վրայ բազմած Սանչոն, իր հաւատարիմ ուղեկիցը:

Սիրելի Միկել, մարդոց միտքին եւ երեւակայութեան մէջ անմահացուցիք Տոն Քիշորթը.– ի՞նչ գովելի աշխատանք: Դժուար թէ կարենամ երեւակայել ուրիշ արկածա-խնդրութիւն մը հերոսիդ համար, որ քեզմէ ուրիշ մէկը չէ:

Օ՛ն ուրեմն, միասին երթանք Տոն Քիշորթի եւ Սանչոյի յայտնագործումը կատարելու:

2002

Տակ

Համարշէօլտ, հանդիսացար Միացեալ Ազգերու Կազմակերպութեան երկրորդ ընդհանուր քարտուղարը: Սերելով Շուէտէն՝ երկիրէ մը որ երկար ատենէ ի վեր պատերազմ չէր տեսած, որպէս առաքելութիւն ունէիր կարեւորութեան սահմաններուն մէջ ամրապնդել խաղաղութիւնը աշխարհի վրայ: Որպէս պարտականութեանը գիտակից մարդ՝ աշխատեցար որ կազմակերպութիւնդ պահէ իր որոշումներուն ազատութիւնը: Եւ յաջողեցար: Այսօր մարդ կը ցաւի եւ անցեալը կը բաղձայ, ի տես նոյն կազմակերպութեան որ վերածուած է միակողմանիութեան եւ տի-րող միակ մտածողութեան մը դրօշակակիրին:

2002

Որդիներ

Որդիներդ՝ Շորն Ուաշինկթըն, դո՛ւն՝ ազատարարը Ամերիկայի Միացեալ Նահանգներուն: Դուն՝ որ պարկեշտութեամբ եւ արդարամտութեամբ պայքարեցար աւելի լաւ աշխարհի մը համար, նայէ՛ որդիներուդ, մեկնումէդ երկու դար ետք, եւ հակառակ

կատարուած վիթխարի նուաճում-ներուն, տես թէ ինչպէս անոնք կը նուաճեն միջոցը մինչեւ Մարտ՝ ջուրի աղբիւրներու փնտրտութիւն, երկրին առատ ջուրը յանձնելով ապականութեան եւ միլիոնաւոր չքաւոր-ներ ծարաւէն մեռնելու ճակատագրին:
Ասո՞նք էին այն որդիները զոր փափաքած էիր ունե-նալ, Ուաշինկթըն:
2002

Հատուածներ *ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ԷՆ*

Ներածական-էն

Որդեակս,

Քանի քանի՛ անգամներ մեծ հայրդ կրկներ էր ինձի որ թուանշանները սպաններ էին զինք, ըսել ուզելով որ իր ասպարէզային զբաղումը տոմարակալութիւն ըլլալով, զինք հեռու պահած էր գրելէն:

Գալով ինձի, պիտի հաստատեմ որ աւելի գրականութիւնն է որ սպաննեց զիս, որովհետեւ զայն զետեղեցի հոն ուր իր տեղը չէր, այսինքն ոչ գրական երկերու մէջ: Բնականաբար գրածներս օգտակար եղան եւ սիրուեցան շատերու կողմէ: Նաեւ ինձի՛ կեանքս շահելու օգնեցին: Բայց զիս հեռացուցին իսկական գրականութենէն որ կը հանդիսանայ ստեղծագործութեան գանձա-րանը:

Դուն որ ինքզինքդ ազատագրել կ'ուզես,

Գիտցիր որ ամէն մարդկային էակ ունի արմատներ որոնցմով հպարտ պէտք է ըլլայ ան, ինչ որ ալ են անոնք. պայմանաւ որ կառչի անոնց արժանիքներուն եւ մերժէ թերութիւնները: Քու արմատներդ կը հասնին մինչեւ մարգարէներու, առաքեալներու եւ սուրբերու հողը: Չեմ ուզեր խօսիլ միայն անոնց մասին որոնք ծանօթ են, այլ նաեւ այն մարգարէներու, առաքեալներու եւ սուրբերու մասին որոնք ծարաւ էին գիտութեան եւ մշակոյթի, ինչպէս նաեւ ամէն մարդու որ գիտցաւ իր մարդկութիւնը ապրիլ ըստ իր ժամանակի արժէքներուն:

Արմատներդ, որդեակս, Արեւելքի մէջ են, աշխարհի կեդրոնը: Արամէացիները, միակ Աստուած Էլ-ի ստեղծիչները, տուած են քու մականունդ, որովհետեւ Նասաման Էլ-ի ծառան էր: Ինչ կը վերաբերի սուրիացի Նասամանին, որ արամէացիներու բանակին պետն էր, Ք.ա. Թ. դարուն բորտութենէ բժշկուած է Եղիշէ մարգարէին կողմէ, Յորդանան գետին մէջ եօթն անգամ լուացուելէ ետք: Աւելին՝ արամէերէնը դարձաւ նոյնինքն Յիսուսի լեզուն:

Դուն նաեւ զաւակն եւ կանացիներու Փիւնիկէին, անոնց որոնք հնարեցին գրական լեզուն բայց զայն չկարողացան երկար պահել եւ հարստացան օտար քաղաքակրթութիւններով, կորսնցնելով իրենց ինքնութիւնը:

Նմանապէս զաւակն եւ արաբներու, որոնք խիզախօրէն պայքարեցան արդարութեան համար փառաւոր դիրքերէ, որոնք այսօր գրեթէ անհետացած են եւ որոնց վերածնունդին համար շատ յուսադրիչ երեւոյթներ չկան:

Զաւակն եւ նաեւ Լիբանանի, որուն յաջողութիւնը օրինակելի է անհատական սակայն ոչ ազգային մակարդակի վրայ, ընդհանրացած վաճառամոլութեան որպէս արդիւնք:

Վերջապէս զաւակն եւ արեւելեան եկեղեցիի մը որ արմատներ ունի Պատմութեան մէջ, հակառակ երկփեղուած ըլլալուն, եւ որուն հաւատացեալները տակաւին իրենց շարականները կ'երգեն Աստուծոյ փառքին համար:

Ասոնցմով հպարտ եղիր, հոգեակս: Ծարմնակ եւ մասնաւորապէս չիշէ՛ որ ծնունդն եւ պահու մը եւ ամբողջ մարդկութեան: Չմոռնաս որ զաւակն եւ ընտանիքի մը որուն անդամները երբեք չեն կեղեքած ունէ մէկը: Իր մարդկութիւնը լիովին ապրելու համար, կը բաւէ որ Մարդ չկեղեքէ որեւէ մէկը, բառին ամենալայն եւ սպառիչ առումով: Խիղճդ ազատագրէ, նոյնիսկ բանտին մէջ ուր կը ծուարիս անարդար վճիռէ մը ետք, փոխանակ զայն բեռնաւորելու անհրաւ կերպով ազատութիւնն ըմբռնելով...

1998

الثقافة بالمجان

Ath-Thaqafa bil Majjan

Série littéraire gratuite établie et dirigée depuis 1991 par
Free of charge literary series established and directed since 1991 by
Serie literaria gratuita establecida y dirigida desde 1991 por
Naji Naaman

najinaaman
an-najiyyat

AN-NAJIYYAT

النَّجِيَّات

© *Tous droits réservés – All rights reserved – Todos los derechos reservados – الحقوق محفوظة*
Maison Naaman pour la Culture & www.najinaaman.org